



Համարը N 1213-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2014.11.19/63(1076)
Հոդ. 1023

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 29.11.2014

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 30.10.2014
Ստորագրման ամսաթիվը 10.11.2014
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

Գապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻՆ ԼԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հոկտեմբերի 2014 թվականի N 1213-Ն

ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻՆ ԼԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել հանքային ջրերին ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը գործում է մինչև վերահսկողության ենթակա տվյալ ապրանքների վերաբերյալ Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) տեխնիկական կանոնակարգի կիրառումը Հայաստանի Հանրապետությունում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Հ. Աբրահամյան

2014 թ. նոյեմբերի 10
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
հոկտեմբերի 30-ի N 1213-Ն որոշման

ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻՆ ԼԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն իրավական ակտով սահմանվում են բուժիչ կամ կանխարգելիչ նպատակներով օգտագործման համար նախատեսված տարբեր քիմիական կազմ ունեցող բնական հանքային խմելու բուժիչ և բուժիչ սեղանի ջրերի նկատմամբ մարդու համար անվտանգության հիգիենիկ պահանջները (այսուհետ՝ պահանջներ): Տվյալ արտադրանքի բուժիչ հատկությունները սույն իրավական ակտի կարգավորման առարկա չեն:

II. ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

2. Սույն իրավական ակտում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **հանքային ջրեր**՝ հիմնական իոնաաղային և գազային բաղադրությամբ, կենսաբանական ակտիվ նյութերի բարձր պարունակությամբ և յուրահատուկ հատկություններով (ռադիոակտիվությունը, միջավայրի ջերմաստիճանը, ռեակցիան) պայմանավորված մարդու օրգանիզմի վրա բուժիչ ազդեցություն իրականացնող բնական ջրեր:

2) **խմելու հանքային ջրեր**՝ 1 գ/դմ³ -ից ոչ պակաս հանքայնացումով կամ ավելի քիչ հանքայնացումով, սակայն խմելու հանքային ջրերի համար ընդունված բալնեոլոգիական նորմաներից ոչ պակաս քանակություններով կենսաբանական ակտիվ նյութեր պարունակող ջրեր:

3) **խմելու հանքային բուժիչ սեղանի ջրեր**՝ 1-ից 10 գ/դմ³ -ից հանքայնացում ունեցող կամ ավելի քիչ հանքայնացումով, սակայն խմելու հանքային ջրերի համար ընդունված բալնեոլոգիական նորմաներից ոչ պակաս քանակություններով կենսաբանական ակտիվ նյութեր պարունակող ջրեր:

4) **խմելու հանքային բուժիչ ջրեր**՝ 10-ից 15 գ/դմ³ -ից հանքայնացում ունեցող կամ ավելի քիչ հանքայնացումով սակայն մեծ քանակություններով կենսաբանական ակտիվ տարրեր (արսեն, բոր) պարունակող ջրեր: Թույլատրվում է ավելի բարձր հանքայնացումով բուժիչ ջրերի օգտագործումը:

III. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

3. Հանքային ջրերի շշայցումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված միասնական սանիտարական պահանջներին և խմելու հանքային ջրերի մշակման և շշայցման պահանջները սահմանող տեխնոլոգիական հրահանգին համապատասխան, ինչպես նաև խմելու հանքային ջրերի մշակում և շշայցում իրականացնող կազմակերպությունների համար սահմանված սանիտարական կանոնների պահպանմամբ:

4. Սինթետիկ նյութերից պատրաստված տարողություններով հանքային ջրերի պահման ժամկետներն ու ջերմաստիճանային պայմանները համապատասխանում են պատրաստի արտադրանքի վերաբերյալ նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջներին:

5. Հանքային ջրերի մշակման համար թույլատրվում է կիրառել հետևյալ եղանակները՝

1) երկաթի, մանգանի, ծծմբի միացությունների, ինչպես նաև արսենի առանձնացում օդով և (կամ) թթվածնով մշակելու ճանապարհով:

2) չլուծվող տարրերի (երկաթի, ծծմբի միացությունների) տարանջատում զտման և պատվածքազտման ճանապարհով:

3) բացառապես ֆիզիկական մեթոդներով ամբողջական կամ մասնակի ազատում ածխածնի ազատ երկօքսիդից:

4) հազեցում ածխածնի երկօքսիդով:

5) վերամշակում կիտրոնաթթվով կամ ասկորբինաթթվով:

6) վերամշակում ծծմբաթթվային արծաթով:

6. Սույն պահանջների 5-րդ կետում նշված եղանակներից բացի, հանքային ջրերի վերամշակման համար թույլատրվում է կիրառել նաև այլ եղանակներ, որոնք չեն փոխում կատիոնների (կալցիումի, մագնեզիումի, նատրիումի, կալիումի) և անիոնների (հիդրոկարբոնատների, սուլֆատների, քլորիդների), ինչպես նաև վերամշակվող հանքային ջրերում կենսաբանական ակտիվ նյութերի պարունակությունը և հարաբերակցությունը:

7. Շշայցման համար նախատեսված հանքային ջրերի մշակման համար չի թույլատրվում օգտագործել քլոր պարունակող միջոցներ:

8. Ծծմբաթթվային արծաթով հանքային ջրերի մշակման ժամանակ տարայավորված հանքային ջրում արծաթի զանգվածային խտությունը չի գերազանցում 0,2 մգ/դմ³:

9. Հանքային ջրերի գազավորման համար օգտագործում են ածխածնի երկօքսիդ:

10. Շշայցված հանքային ջրեր արտադրողները իրականացնում են տարողությունների ախտահանում՝ ապահովելով համաճարակաբանական անվտանգությունը և անվտանգարությունը՝ ըստ քիմիական կազմի:

11. Հանքային ջրերի շշայցման համար թույլատրվում է օգտագործել Միասնական սանիտարական պահանջներին համապատասխանող տարողությունները՝ հաշվի առնելով դրանցում արտադրանքի պահման առավելագույն ժամկետները:

IV. ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

12. Հանքային ջուրը համապատասխանում է հիգիենիկ նորմատիվներին շշայցման, փոխադրման, պահման և սահմանված պիտանիության ամբողջ ժամկետի ընթացքում:

13. Հանքային ջրերին անվտանգությանը ներկայացվում են հետևյալ պահանջները:

- 1) Բարենպաստ զգայորոշման հատկություններ.
 - 2) անվտանգությունը՝ ըստ քիմիական կազմի.
 - 3) խմելու ջրի անվտանգությունը՝ համաճարակաբանական տեսանկյունից.
 - 4) անվտանգությունը՝ ռադիոակտիվության տեսանկյունից:
14. Ըստ զգայորոշման ցուցանիշների՝ հանքային ջրերը համապատասխանում են սույն պահանջների N 1 աղյուսակում սահմանված պահանջներին.

Աղյուսակ N 1

Զգայորոշման ցուցանիշները

Ցուցանիշի անվանումը	Բնութագիրը
Արտաքին տեսքը	Թափանցիկ հեղուկ՝ առանց կողմնակի խառնուկների: Թույլատրվում է հանքային աղերի աննշան նստվածքի առկայությունը:
Գույնը	Անգույն կամ դեղնավունից մինչև կանաչավուն երանգներով հեղուկ
Համը և հոտը	Զրում լուծված նյութերի համալիրի համար բնորոշ

15. Ըստ հանքայնացման, հիմնական իոնների, քիմիական կազմի՝ հանքային ջրերը համապատասխանում են նորմատիվ իրավական ակտերով և սահմանված կարգով հաստատված պատրաստի արտադրանքի վերաբերյալ արտադրողի նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջներին:

16. Հանքային ջրերում բաղադրիչների զանգվածային խտությունները չպետք է գերազանցեն սույն պահանջների N 2 աղյուսակում սահմանված մակարդակները.

Աղյուսակ N 2

Բաղադրիչների զանգվածային խտությունները

Բաղադրիչի անվանումը	Զանգվածային խտությունը, մգ/դմ ³ , ոչ ավելի
Նիտրատներ (NO ₃ ⁻)	50,0
Նիտրիտներ (NO ₂ ⁻)	2,0
Արսեն (As) (բնական կենսաբանական ակտիվ արսեն պարունակող հանքային բնական խմելու բուժիչ ջրերում արսենը թունավոր տարր չէ)	0,1
Վասպար (Pb)	0,01
Ցինկ (Zn)	5,0
Վաղմիում (Cd)	0,003
Պղինձ (Cu)	1,0
Սնդիկ (Hg)	0,001
Սելեն (Se)	0,05

Ստրոնգիում (Sr)	25,0 (բուժիչ և բուժիչ սեղանի ջրերի համար)
Ֆտոր (F)	15,0 (բուժիչ ջրերում)
	10,0 (բուժիչ սեղանի ջրերում)

17. Ըստ մանրէաբանական ցուցանիշների՝ հանքային շշպղված ջրերը համապատասխանում են սույն պահանջների N 3 աղյուսակում սահմանված պահանջներին.

Աղյուսակ N 3

Մանրէաբանական ցուցանիշները

Ցուցանիշի անվանումը	Մակարդակը, պարունակությունը
Մեգոֆիլ աերոբ և ֆակուլտատիվ անաերոբ մանրէների քանակը(ՄԱՖԱՄՔ) ԳԱՄ 1 սմ ³ -ում, ոչ ավելի	100
Ադիքային ցուպիկի խմբի մանրէներ (կոլիձևեր)	չեն թույլատրվում 333 սմ ³ -ում
Ախտածին մանրէները, այդ թվում՝ սալմոնելաների ցեղի մանրէներ	չեն թույլատրվում 100 սմ ³ -ում
Պսեուդոմոնաս աերուգինոսա (Pseudomonas aeruginosa)	չի թույլատրվում 100 սմ ³ -ում

18. Հանքային ջրերի պերմանգանատային օքսիդացում պետք է լինի 0,5 - 5,0 մգ՝ սպառված թթվածնի 1 դմ³ -ում:

19. Ըստ ճառագայթային անվտանգության ցուցանիշների՝ շշպղված հանքային ջրերը համապատասխանում են սույն պահանջների N 4 աղյուսակում սահմանված պահանջներին.

Աղյուսակ N 4

Ցուցանիշները	Չափի միավորները	Շշպղված հանքային ջրերի որակի նորմատիվները, ոչ ավելի		Վնասակարության ցուցանիշը (ջրի տարեկան սպառման ժամանակ ստեղծվող ազդեցիկ չափաքանակը չպետք է գերազանցի 0,1 մ ³ օդ)
		առաջին կարգ	բարձր կարգ	
Ճառագայթային անվտանգության ցուցանիշները				
Տեսակարար գումարային ալֆա ռադիոակտիվություն	Բկ/լ	0,2	0,2	ճառագայթ

Տեսակարար գումարային բետա ռադիոակտիվություն	Բկ/լ	1	1	Ճառագայթ
---	------	---	---	----------

V. ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆԸ, ՓՈԽԱԴՐՄԱՆԸ ԵՎ ՊԱՀՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 20. Հանքային ջրերը շարունակվում են սննդամթերքի հետ շփման համար նախատեսված սպառողական տարաներում:
- 21. Հանքային ջրերի մակնշումը պարունակում է գործող նորմատիվ-իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանող տեղեկատվություն:
- 22. Հանքային ջրերի պահման և փոխադրման պայմանները, ինչպես նաև պիտանիության ժամկետը համապատասխանում են սահմանված կարգով հաստատված տեխնիկական պայմաններում, տեխնոլոգիական հրահանգներում և (կամ) ստանդարտացման փաստաթղթերում նշված պահանջներին:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան